№ 58 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 16 1903 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 16 № 58

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մարդիկ, որոնք չը գիտեն թէ ինչ են անում. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կառավարչի յիշատակարանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

—

Բարեգործութիւնների պաշտօնական սեզօնը դանդաղ առաջ է գնում. Նրա մեծ կէսը արդէն անցել է, բայց ինչ փաստեր կարող ենք արձանագրել մեր հոգու մխիթարութեան համար։

Մխիթարականը միշտ քիչ է մեր կեանքում։ Ինչու է այսպէս, ընթերցող։ Ցանկանալով ձեզ այնպիսի իրողութիւններ տալ, որոնք ապացոյց լինէին, թէ մենք գիտենք մեր խեղճին ու անանկին եղբայրաբար խնամել, ես այսօր միայն երկու հասարակ, առօրեայ գործեր կարող եմ յիշատակել։ Մեր երկու բարեգործական ընկերութիւնները—մէկը Թիֆլիսի Հայոց, միւսը Թիֆլիսի Հայուհեաց, պատրաստվում են իրանց տարեկան հաշիւները ներկայացնել։ Մի հաշուի հետ դուք արդէն ծանօթ էք «Մշակից». Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան հաշիւն է դա։ Մի քանի հատ փոքրիկ թւանշաններ։ Նրանք ցոյց են տալիս, որ մենք, յամենայն դէպս, հրաշքներ և քաջագործութիւններ չենք ցոյց տուել բարեգործութեան ասպարէզում։ Միշտ նոյնը, միշտ փոքրիկ փշրանքներ, միշտ եօլայ «տանել»։ Ապահովապէս մի և նոյն պատկերը պիտի ներկայացնէ և Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը։

Ուրեմն անշարժ է մեր վաղեմի մոխրագոյն իրականութիւնը դրական կողմից, առաջադիմութեան քայլերի կողմից։

Բայց տեսէք ինչ խոշոր, ուղղակի հակայական հատակ են ստանում մեր մէջ բացասական փաստերը...

Պարիզում գոյութիւն ունի մի ինչ որ կոմսուհի Քօլօնա։ Ո՞վ է դա, ինչ է դա։ Կենսագրական որոշ տեղեկութիւններ չը կան։ Մի կին, որ էտ և է յանձնարարելի հանգամանք չունի, ոչ բարոյապէս և ոչ ալ նիւթապէս։ Ահա ամբողջ պատկերը...

Այդ կինը յանկարծ լցվում է բարեգործական տենչերով։ Նա ուզում է խեղճ, դժբաղդ երեխաների մայր դառնալ։ Մաքուր զգացմունք է դա։ Ֆրանսիայում, անշուշտ, անհերևակայելի շատ են այդպիսի երեխաներ։ Բայց կոմսուհին դրանց չէ ուզում։ Աչքը դարձնում է չարատանջ Արևելքի վրա, կրակի, լացի և արեան այդ թշուառ հայրենիքի վրա։ Այդտեղից է նա ուզում վերցնել իր գթասրտութեան ամբողջ կրակին ու փայլին համապատասխանող թշուառ երեխաներ։ Հանել կրակներից, արտասունքից, արեան գետերից փոքրիկ արարածներ, խնամել նրանց, մեծացնել—ինչ փառաւոր քաջագործութիւն, ինչ քրիստոնէական հերոսութիւն։

Այսպէս է դրսից։ Բայց կայ և ներքին հերոսութիւն։ Գտնում է կոմսուհին մի փչացած հայ, մի տերտէրի որդի, որսում է նրա միջոցով ութ փոքրիկ աղջիկ և չորս տղայ ու տանում է նրանց Պարիզ։ Բարեգործութեան առաջին արարուածը վերջացել է, նա կատարվում էր վարագոյրի ետևը։ Սկսվում է երկրորդ արարուածը, արդէն բացարձակ, արդէն առանց վարագոյրի։ Եւ դա այլ ևս բարեգործութիւն էլ չէ, այլ պարզապէս գաղանութիւն...

Փոքրիկները ծեծում են, կեղեքում են։ Փոքրիկները լաց լինելով վազում են Պարիզի հայ քահանայի մօտ, աղաչում են իրանց ազատել...

Խե՞ղճ, դժբախտ երեխաներ։ Ձեր մանկական անմեղ ճակատի վրա դրոշմված է ձեր ամբողջ ժողովրդի դարաւոր, հին, հին վիճակը։ Գերի ընկնել, գերութեան մէջ տանջվել և երկնքի տակ ոչինչ օգնական, ոչինչ հովանաւոր չունենալ, բացի առատ արտասունքներից, որոնք իբր թէ պիտի հալեցնեն գերութեան չղթաները։

Փոխվել է ժամանակը այդ խեղճ գերիների համար։ Ժամանակները փոփոխվում են, բայց հայ գերիների համար «միշտ երէկը կրկնվում է այսօր»։ Մարդկութիւնը գնաց, առաջացաւ, բայց ինչ օգուտ։ Մի ժամանակ հայ երեխան Ասորեստանի, Պարսկաստանի, Արաբիայի խորքերում էր արտասունքով լուանում իր գերութեան չղթաները, իսկ այժմ նոյնը անում է աշխարհահռչակ, գոված ու փառաբանած Պարիզում։

Գերեվարները մի և նոյնն են։ Ահա մի Տուղրիլ-բէկ, ահա և մի կոմսուհի Քօլօնա։ Տուղրիլ-բէկի առաջ լաց էին լինում հայ երեխաները, բայց նրանց քշում էին անապատները։ Կոմսուհի Քօլօնայի առաջ լաց են լինում հայ երեխաները, բայց նրանց պիտի քշեն Մադագասկար կղզին։ Հայ աղջիկը, մի որ և է Բաղդէշի գաւառից, Մադագասկարում... ինչ ասէք—ճակատագիր...

Եւ նկատեցէք, Ռումանիայի մի ինչ որ քաղաքում դեռ ապասում են տասն և վեց երեխաներ կոմսուհի Քօլօնայի այդ բարեգործութեան...

Եւ այսպէս, հայ երեխաները,—անուանեցէք նրանց որբեր թէ տղաներ, մի և նոյն է,—Պարսկաստանից և Ռումանիայից մինչև Պարիզ և այնտեղից Մադագասկար։ Նայեցէք աշխարհագրական քարտէզին։ Այսպիսի ճանապարհներ միայն հայի դժբախտութիւնն է ճանաչում...

Բայց կարող է ուրիշ կերպ լինել։ Ահա ծանր, հոգեմաշ հարց։ Մեզանում, դժբաղդաբար, ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Ապացոյց մեր բարեգործական ընկերութիւնները իրանց գրաշներով։ Ապացոյց մեր բազմաթիւ հարուստները իրանց ապառաժ սրտերով և փակված մանդուկներով։

Թափված են հայ անթիւ որբեր։ Թափված են ճանապարհներին, տների առաջ, ամեն տեղ, ուր կարող է ընկնել խեղճը, անօգնականը։ Նրանց դուք չէք հաւաքում։ Եւ գալիս են ուրիշները, գալիս են կոմսուհիներ և կոմսներ, հաւաքում տանում են։ Պէտք է դեռ խօսել, պէտք է դեռ ապացուցանել։

Խեղճ հայ երեխաներ։ Համաշխարհային այն քաղաքում, ուր արեան վտակներ են թափվել հաւասարութեան, ազատութեան և եղբայրութեան համար, նրանք միայն որբի արտասունք ունեն իրանց գերութեան չղթաները հալեցնելու համար։

Կը հալվեն...

—

Քանի որ խօսքս բարեգործութեան մասին է, չը մոռանամ մի երևոյթ։

Իմ անցեալ զրոյցներից մէկում ես խօսել էի այդ մասին, որ ուսանողներին օգնող ընկերութեան վարչութիւնը հրաժարվել է ընդունել այն 5 կոպէկները, որ յատկացրել էր իշխան Ճալճալաձէի հայակերական գրուածքի թարգմանիչը՝ այդ բրոշիւրի ամեն մի ծախված օրինակից։

Ինչպէս յայտնի է ընթերցողներին, այդ ընկերութեան ընդհանուր ժողովը ձայների անագին մեծամասնութեամբ վճռեց, որ վարչութիւնը իրաւունք չունէր այդպիսի վճիռ կայացնելու, քանի որ այդ տեսակ հարցեր վճռողը պիտի ընդհանուր ժողովը լինի։ Եւ ահա

Երկու հոգի վտանգաւոր այրոցներ են ստացել. չօրտ ընկիմ. փախչէին...։ Ափսոս իմ № 7։

Փետրվարի 11.

Վիչկաներն արդէն պատրաստ են. № 7-ն էլի խփեց...։ Ուրախ եմ։

Փետրվարի 14.

Ի՞նչ չարաճճին է այս անպիտան Օլիան. բաւական է, որ «Стрекоза»-ն պօստից առն եկաւ, էլ հոգիս հանում է.—Էս կարդա, Էն կարդա,—ես էլ կարդում եմ, և երկուսով քանքան ծիծաղում։ Շատ անիծվածն է. ռոճիկն աւելացնելու եմ։

Փետրվարի 17.

Կատարեալ զզուանք... Էս քամուն, էս ցըրտին գոնէ-դուռն են ընկել,—ողորմութիւն։—Տեսնել չեմ կարող։ Անիրաւները դիտմամբ են ցուրտ ու ցեխ եղանակ ընտրում, կուրծքերին էլ բաց անում, որ դութ չարժեն։ Ստորացնում են իրանց։ Ես նրանց բացատրեցի, որ ողորմութիւն խնդրելը լաւ բան չէ, որ բուրավոյներն աղքատանոցներ չեն, և ցոյց տուի, թէ ուր պէտք է դիմեն։ Այդ իմ բարոյական պարտականութիւնս էր։

Փետրվարի 20.

Այսօր «Стрекоза» չը ստացայ։

Փետրվարի 27.

Այսօր մի լաւ քէֆ ունէինք. հաւաքված էինք 15 հոգի, բոլորս էլ ինժեներներ, բացի մէկից. լաւ կերանք, խմեցինք. խօսեցինք մեքենաները կատարելագործելու, նաւթային շերտերի խորանալու մասին. դրա համար երկար վիճաբանեցինք։

Գրականութիւնից էլ խօսեցինք. ես «Стрекоза»-ից անէկդոտներ պատմեցի։ Գրականութիւնից խօսելու ժամանակ, այսօր միայն իմացայ, որ հայերի մէջ գրողներ կան. այդ ինձ Արկադիյ Խրիստոֆորովիչն ասաց. նա կարդացել է «Братская помощь» գիրքը, ուր թարգմանված է Ահարոնեանի մի գրութիւնը։ Մի՛ ուրիշն էլ, նա, որ ինժեներ չէր և Մարկ Կավրիլիչի հետ էր եկել Իբրև հիւր, ուզեց մի իրան ցոյց տալ։

—Ներողութիւն, պարոնա՛ք,—ասաց նա,—դուք հետաքրքրվում էք մայրենի լեզուով։

Նրան անպատասխան թողեցինք, բայց յիմարը չը հասկացաւ, որ ասում ենք—ձէնդ կտրիր. այլ աւելի ոգևորված՝ շարունակեց.

—Ցանցանք է մայրենի լեզու չիմանալը. իսկ այդ կրկնակի յանդգնք է բարձրագոյն կրթութեան տէր մարդկանց համար։ Նոյն իսկ ձեզ անծանօթ են Բաֆֆի, Գամառ-Քաթիպա, Աբովեան, Նալբանդեան, մինչդեռ դրանք...

Բայց ես նրան չը թողեցի վերջացնել. համբերութիւնս հատել էր։

—Ի՞նչ Բաֆֆի, ինչ Աբովեան. դրանք ինձ համար Տօլստոյ են դառնալու, Մակսիմ Գորկի՞յ են դառնալու, թէ Անտոն Չեխո՛վ։ Տուէք մեզ այդպիսի հեղինակներ և մենք կը կարդանք։

—Իսկ ձեր թուած հեղինակների ո՞ր երկերն էք համեմատում հայ գրողների հեղինակութիւնների հետ,—խէթ-խէթ նայելով՝ ասաց խօսակից ճառախօս։

Ես խօսքը կտրեցի, որովհետև իմ անուանված երեք հեղինակներից Տօլստոյի «Хозяинъ и работникъ»-ն էի կարդացել, այն էլ մոռացել էի, թէ ինչի մասին էր գրված։

Փետրվարի 28.

Գլուխս սաստիկ ցաւում է. երէկ շատ էի խմել։

Մարտի 10։

Ա՜յդպէս... այ թէ միւս անգամ էլ կը գրես։

Երևակայեցէք, այսօր պրօմիսլից վերադառնում եմ, տեսնեմ ծանօթներիցս մէկը ձեռքով է անում։

Կառքը կանգնեցրի։

—Տո՛, ինչեր են գրել քո մասին,—ասաց նա։

—Ո՞րտեղ,—զարմացած հարցրի ես։

—«Մտրակում»—պատասխանեց նա և համարն ինձ մեկնեց։

Էլ ձայն չը հանեցի. նստեցի կառքն ու եկայ դրասենեակ։ Բաց արի թերթը, շուռ ու մուռ տուի և, որովհետև հայերէն տառերը դժուարութեամբ եմ ջոկում, մի կերպ դասայ այն յօդուածը, տակը X. ստորագրած։ Կարդալ չէի կարող։ Խիստ ցանկացայ բովանդակութիւնն իմանալ. տուի մեր ծառայողներից մէկին, որ թարգմանէ ռուսերէն։

Թարգմանութիւնն ստանալուց՝ ձեռքերս թուլացան. ինձ կատարելապէս խայտառակել էին. մինչև անգամ չէին մոռացել գրելու, որ բանտորների ռոճիկները կրճատում եմ, իսկ Օլիային՝ աւելացնում։

Լաւ է, որ ծանօթներիս մեծամասնութիւնը հայերէն կարդալ չը գիտէ, թէ չէ՝ չարախնդութեան կենթարկէին ինձ։ Տակը X է ստորագրած. չատ լաւ, թող X լինի, բայց ես էլ նրա համար եմ ինժեներ, որ խնդրի մէջ դրված X-ը գտնեմ, ու գտայ. դուրս եկաւ, որ այդ Իքսը մեզ մօտ ծառայող դրծակատարներից մէկն է։ Իսկոյն պատուիրեցի հաշիւը տալ ու վճարել։ Նա ցանկացաւ բացատրութիւն խնդրել. բայց իմ բացատրութիւնս արդէն տրված էր։

Մարտի 15.

Պատուիրեցի, որ նաւթահորերում բանող բանուորների ռոճիկները մի-մի բուբլով պակասեցնեն. ծախսերնիս չատ է։

Մարտի 17.

Միլիոնովին չատ դուր եկաւ, որ նորից ռոճիկներ եմ կրճատում։ Ի դէպ, ասաց, որ մի ջուխտ ձի է բերել տուել, 13,000 բուբլով։

Մարտի 18.

Ի՞նչ թարս օր է... 500 բուբլի տանուլ տուի։ Բայց չատ չեմ ցաւում. Միլիոնովի նաւթը լինի սաղ։

Մարտի 21.

№ 48-ը վերջացրինք։ Լաւ նաւթ է տալիս. եթէ այդպէս շարունակվի, օրեկան 5000 կը տայ։

Մարտի 30.

Ասում են, որ 1895 թուին Հայաստանում կոտորած է եղել. տեսնես ճիշտ է այդ։

Արտագրեց՝ Մ. Տէր-Դանիէլեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

—

Առաջին երես

19... թ. յունվարի 17.

Զօրտ վազմի... չեմ իմանում, որտեղից են լոյս ընկել սրանք. ախր ո՞վ է լսել, որ դործի ժամանակ ներս ընկնեն կաբինէտ և կողմնակի գործի վրա խօսեն։

Երևակայեցէք. ժամը 11-ն է. նստած կարինէտում, № 13 բուբավոյի տուած սուտօշնի դաբիչան էի համեմատում նախընթաց օրերի հետ, յանկարծ մէկը ներս պրծաւ։

—Պարոն Դդումեան, բաժանորդ գրվեցէք «Մտրակ» լրագրին. այդ ձեր բարոյական պարտականութիւնն է։

Անհերեսութիւն...

Նախ և առաջ՝ ինչու «պարոն Դդումեան» և ոչ Իվան Նիկիտիչ Դդումով. և երկրորդ՝ ինչու տասն բուբլի տալ «Մտրակին», որ ոչ «приложеніе» ունի, ոչ էլ կարգին գրողներ կան մէջիցը. հաղիր «Стрекоза» կը բերեմ, որ իրիկուններն անկողնումս կարդամ, ծիծաղեմ։

Ես այդպէս էլ ասացի «պարոն Մտրակեանին» (առ, քեզ.), թէև, ճիշտն ասած, չը գիտեմ «Մտրակում» կարգին գրողներ կան. ասենք՝ իսկի չը դիտեմ, հայ գրող կայ, թէ չէ։

Յունվարի 18.

Ամբողջ կեանքումս դեռ այսքան յուզված չէի. № 7-ը ֆանտան է խփում... այդ իմ հնորքս է. ինչ է նշանակում ինժեներ լինել։ Մեր Միլիոնովն ուզում էր 152 սաժէնում կանգնեցնի, բայց ես ուղղակի զօռով 5 սաժէն էլ փորել տուի և տա՛... ֆանտան... առաջին անգամն է, որ այսքան յուզվում եմ։

Փետրվարի 3.

Ուրա՛ վիչկա այրվեց. հրդեհը Մայմունովի պրօմիսլից ծագեց. ափսո՛ս իմ № 7, ափսո՛ս...։

Փետրվարի 11.

Վիչկաներն արդէն պատրաստ են. № 7-ն էլի խփեց...։ Ուրախ եմ։

Փետրվարի 14.

Ի՞նչ չարաճճին է այս անպիտան Օլիան. բաւական է, որ «Стрекоза»-ն պօստից առն եկաւ, էլ հոգիս հանում է.—Էս կարդա, Էն կարդա,—ես էլ կարդում եմ, և երկուսով քանքան ծիծաղում։ Շատ անիծվածն է. ռոճիկն աւելացնելու եմ։

Փետրվարի 17.

Կատարեալ զզուանք... Էս քամուն, էս ցըրտին գոնէ-դուռն են ընկել,—ողորմութիւն։—Տեսնել չեմ կարող։ Անիրաւները դիտմամբ են ցուրտ ու ցեխ եղանակ ընտրում, կուրծքերին էլ բաց անում, որ դութ չարժեն։ Ստորացնում են իրանց։ Ես նրանց բացատրեցի, որ ողորմութիւն խնդրելը լաւ բան չէ, որ բուրավոյներն աղքատանոցներ չեն, և ցոյց տուի, թէ ուր պէտք է դիմեն։ Այդ իմ բարոյական պարտականութիւնս էր։

Փետրվարի 20.

Այսօր «Стрекоза» չը ստացայ։

Փետրվարի 27.

Այսօր մի լաւ քէֆ ունէինք. հաւաքված էինք 15 հոգի, բոլորս էլ ինժեներներ, բացի մէկից. լաւ կերանք, խմեցինք. խօսեցինք մեքենաները կատարելագործելու, նաւթային շերտերի խորանալու մասին. դրա համար երկար վիճաբանեցինք։

Գրականութիւնից էլ խօսեցինք. ես «Стрекоза»-ից անէկդոտներ պատմեցի։ Գրականութիւնից խօսելու ժամանակ, այսօր միայն իմացայ, որ հայերի մէջ գրողներ կան. այդ ինձ Արկադիյ Խրիստոֆորովիչն ասաց. նա կարդացել է «Братская помощь» գիրքը, ուր թարգմանված է Ահարոնեանի մի գրութիւնը։ Մի՛ ուրիշն էլ, նա, որ ինժեներ չէր և Մարկ Կավրիլիչի հետ էր եկել Իբրև հիւր, ուզեց մի իրան ցոյց տալ։

ապասում են ընդհանուր ժողովի վճռին։

Ի՞նչ կը լինի այդ վճիռը—դեռ չը գիտենք։ Բայց ընկերութեան անդամներից մէկը, բժիշկ Ա. Խատիսեան, տեղական ռուս թերթերից մէկում տպեց մի շատ համակրելի նամակ։ Այդտեղ նա ապացուցանում է, որ ընդհանուր ժողովը պարտաւոր է ընդունել նոյն վճիռը, ինչ կայացրել է վարչութիւնը։

Ինչո՞ւ։

Մեզանում արմատացած է հասկացողութիւն, թէ փողով ամեն ինչ կարելի է անել։ Սա մի սոսկալի, անբարոյական սկզբունք է։ Փող ունես—ուժեղ եմ. փող ունես—և հրամայում եմ։ Գաղափար, հասկացողութիւն, բարձր մտքեր,—ամեն ինչ ոչինչ է քեզ փողի առջև։ Ես մարդկը պպանեմ, կը կողոպտեմ նրան, այդ կողոպտած փողերի մի մասը կը տամ քեզ, որ եկեղեցում մի պատկեր դնես, և դու պարտաւոր ես ինձ երկրպագել, ինձ միայն բարեգործ այլ և բարերար, բացառիկ դէպքերում նոյն իսկ անզուգական բարերար, ազգային բարերար անուանել։

Ես եղբայրասպան, հակամարդկային մի գրուածք կը պատրաստեմ, կը ծախեմ, մի քանի կոպէկներ կը տամ և դու իմ այդ կոպէկներով պարտաւոր ես զարդարել քո ամենամաքուր տաճարներից մէկի ճակատը։

Ճիշտ է, որ փողը այդպիսի ոյժ պիտի լինի։ Ճիշտ է, որ կարելի է և պէտք է վերցնել ամեն տեսակ փող։

Ոչ, ճիշտ չէ։ Չէ կարելի ընդունել ամեն տեսակ փող, չէ կարելի բարեգործ համարել ամեն մէկին։

Այս սկզբունքը քարոզել է «Մշակը» իր հիմնարկութեան օրից։ Գրիգոր Արծրունին միշտ կրկնում էր, որ անբարոյական միջոցներով բարերար դառնալ չէ կարելի։

Երկար ժամանակ մեր ականջին խորթ էր թւում այս ձայնը։ Մենք չէինք կարողանում հաշտվել նրա հետ, մենք հարցնում էինք. «Փող տուող լինի, բայց ընդունող չը լինի, սա ինչի նման է»։

Բայց այժմ այլ ես այսպէս չենք դատում։ Այժմ հասարակութիւնը զարգանում է։ Նա պիտի զարգանայ դեռ էլ շատ, նա իր գիտակցութեամբ պիտի բարոյական հասկացողութիւնների, վսեմ գաղափարների պահապանը դառնայ։ Միայն այդ տեսակ դատաիրակութիւնը կարող է ստեղծել այնպիսի կարգեր, որոնք կը տանեն մեզ դէպի երջանկութիւն։

Ահա այդ դատաիրակութեան մի փորձ է դրված մեր հասարակութեան առաջ։ Եւ ես միացնում եմ իմ ձայնը պ. Խատիսեանի անկեղծ, տաք խօսքերի հետ և նոյնպէս ասում եմ.—Ոչ, չը պէտք է ընդունել...

Լ.

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ՉԸ ԳԻՏԵՆ, ԹԷ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ

Այդպիսի մարդիկ—որքան ասէք։ Կեանքի բոլոր խաւերում, քունջ ու պուճախում միշտ լիքն են «մարդիկ», որոնք, յիրաւի երբէք հնարաւորութիւն չունեն իրանց հաշիւ տալու, թէ ինչ են անում։

Լաւ դիտեցէք դրանց և կը տեսնէք, որ այդ մարդիկ մի ինչ որ անմարդկային կնիք ունեն իրանց վրա։ Դրանց խոշոր հիւանդութիւնը՝ իրանց քաջից մեծ ամբիցիա, եսի մի խճճված ցանց, որի մէջ խճճված, քարշ են տալիս իրանց գոյութիւնը։ Պարզ է, այդ դրութիւնը չէ կարող շատ ցանկալի համարվել, հասարակութիւնը չէ կարող տանել այդպիսիներին, այդ լաւ են հասկանում և իրանք և իրանց այդ դրութիւնը արդարացնելու համար՝ իրանց գոյութեանը և «գործունէութեանը» գաղափարական դոյն տալիս։ Եւ սկսում են իրանց տարօրինակ գործունէութիւնը

Մենք գաղափարի համար ենք գործում, հասարակութեանն ենք նուիրել մեր շահերը։ Բայց դա կեղծ է,—դրան ապացոյց իրանց անաջողութիւնը այդ ասպարէզում։ Շատ ուշ են խրատվում նրանք իրանց խարխուլ դրութիւնից։ Ոչինչ չէ համոզում դրանց, որ գաղափարական գործունէութիւնը դիմակ չէ սիրում, որ անցել է այն ժամանակը, երբ գաղափարական գործունէութիւնը մարդկանց կարիէրա էր տալիս, քաղարկում էր նրանց փարիսեցիական ձգտումները և բարերարութեան դիմակի տակ առաջ էին տանում իրանց անձնական հաշիւները։ Այդպիսի մարդիկ վերջին ժամանակները բռնել են նաև մեր ժողովրդական ներկայացումների շուրջը։ «Մշակի» ընթերցողները ծանօթ են այդ գործունէութեան հետ։ Ժողովրդի իւրաքանչիւր անկեղծ բարեկամ կուզենար, որ այդ զուարճութիւններ կազմակերպողների եռանդը միշտ անսպառ լինի, որ նրանց թէ նիւթական և թէ, մանաւանդ, բարոյական ոյժը մեծանայ, ուժեղանայ, որով և կը պայմանաւորվի նոյն գործունէութեան յետագայ աջողութիւնը։

Բայց եկէք տեսէք, որ դափնիների մոլութիւնը հանգիստ չէ տալիս փոքրոգիներին, որ անձնական միտումների հաշով երևան եկած «ժողովրդի բարեկամները», նախանձով և կրքոտ լցված, հանգիստ չեն տալիս մարդկանց—իսկական գործի սիրահարներին։ Ահա այդպիսիները մի նոր «արտիստիական կրուժօկ» են կազմում և իրանց նպատակի համար սիրողներ են որսում արդէն գոյութիւն ունեցող խմբից։

Պարոններ և տիկիններ, թոյլ տուէք գոնէ ասել, որ ձեր նպատակները առաջ մի տանէք ուրիշի հաշով։ Դուք պարզ տեսնում էք, թէ ինչպիսի աջողութեամբ են գնում ժողովրդական ներկայացումները և ինչպիսի ոգևորութեամբ է ժողովուրդը դիմաւորում և ընդունում։ Նախ քան ձեր ոտնձգութիւնները, մի բօպէ պատկերացրէք կեղտի մէջ կորած և ամբողջովին ոգևորութիւն դարձած բանւորին, արհեստաւորին, որի ջինջ և մաքուր հոգին անկեղծ բաւականութիւն էր ստանում այդ զուարճութիւններից։ Դուք լաւ տեսնում էիք, ինչպէս ներկայացմանը ներկայ լինելու հնարաւորութիւն չունեցող մշակը գլխիկոր, վշտացած հեռանում էր առդիտորիայի պատերի տակից՝ երկար ժամանակ անյոյս սպասելուց յետոյ։

Արժէ պղտորել այն գործունէութիւնը, որը յատկացրված է այդ դասակարգին։ Քարերը կաղաղակեն այդպիսի անարդարութեան դէմ։ Ջուր պղտորելը անպատւաբեր գործունէութիւն է ընդհանրապէս, և մանաւանդ, երբ այդ ջուր պղտորելը վտանգում է մի զաղափարական գործունէութիւն։ Կրկնում եմ, ես այդ եռանդը չեմ արդարացնում, չեմ էլ արդարացնում այդպիսի գործում որ և է մրցում։ Բայց եթէ բանը հասնի այդտեղ, հրապարակ եկէք առանց ձեր դիմակների, սոպարէզ դուրս եկէք մաքուր զէնքերով և սկսէք ձեր մրցումը։ Ժողովուրդը անկեղծ կերպով գիտէ ճանաչել և գնահատել իր բարեկամներին և եթէ կարողացաք վաստակել այդ ժողովրդի սէրը և համակրանքը—թող ձեզ մնայ ասպարէզը։

Զէք հաւատում—փորձեցէք։

Ռ. Յովհաննէսեանց

Բագու։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Մարտի 10-ին

Մարտի 4-ին քաղաքային թատրոնում դրամատիկական ընկերութիւնը տուեց իր չորրորդ ժողովրդական ներկայացումը։

Այս անգամ բեմից հասարակութեան պիտի ցոյց տային փոշիով ծածկված հնութիւն ներկայացնող մի մելոդրամա, որի անունը հեղինակը «Կոյր» է դրել, որովհետև սկզբում հերոսը կուրանում է, իսկ վերջում, ինչպէս սովորաբար մելոդրամաներում, ամեն բան աջողութեամբ է վերջանում։

Դրամատիկական ընկերութիւնը օրինակելի եռանդ և աշխատութիւն է ցոյց տալիս։ Նրա տուած մի շարք ներկայացումները մեծ աջողութիւն ունեցան և ընդունելութիւն գտան հասարակութեան կողմից։ Այդ աջողութիւնները պերճախօս ապացոյց են, որ ժողովրդական ներկայացումների հարցը հասունացած է և պահանջ դարձած և ապագայում այդ գործի աջողութիւնը կատարելապէս ապահովված պէտք է համարել։

Զորս ներկայացումներից ընկերութիւնը ունեցել է 800 բուբլուց աւելի արդիւնք։

Թատրոնը և լուսաւորութիւնը ձրի է ընկերութեան համար՝ համաձայն այն պայմանի, որ կապել է դրամատիկական ընկերութիւնը քաղաքային վարչութեան հետ, թատրոնի չէնքի համար յատկացնելով իր դրամագլխից 4000 ր.։ Զուտ արդիւնք չորս ներկայացումներից ընկերութիւնը ստացել է 400 բուբլուց աւել։ Այժմ մնում է ընկերութեան փոքր ինչ առաւել ուշադիր լինել և գործին լաւ ընթացք տալու համար ընտիր ռէպերտուար կազմել։ Հարկաւոր է բեմից բան «սովորեցնել» հասարակութեան, դարձնելով թատրոնը դպրոց և ոչ զուարճութեան և ժամանակ անցկացնելու տեղ։ Դրամատիկական ընկերութիւնը արդէն մի քայլ արել է այդ ուղղութեամբ։ Իշխանուհի Մարիամ Թումանեանի միջոցով արդէն իսկ ստացվել են 30-ից աւել հայկական պիէսներ, որոնք կազմելու են դրամատիկական ընկերութեան միւս տարվայ ռէպերտուարը։ Բացի դրանից, այստեղ էլ գրական լեզուով թարգմանում են մի քանի պիէսաներ։

Մի երկու խօսք էլ յօշոտված խեղճ հայ լեզուի մասին։ Հայ լեզուն Նոր-Նախիջևանի բեմի վրա մի կատարեալ բաբելոնեան խառնակութիւն է։

Դառնանք այժմ Ադամեանի յիշատակին, որը մօտ ժամանակներս ոտնվելու է և արդէն իսկ պատրաստութիւնները սկսել են տեսնվել։

Ադամեանի յիշատակը Նոր-Նախիջևանում վառ է և Նախիջևանցիները նրա յիշատակը յարգանքով են յիշում։

Ադամեան կարծես Նախիջևանցի լինէր, այնքան մօտ է նրա անունը Նախիջևանցու սրտին, անխտիր բոլոր խաւերի համար էլ։

Նախիջևանի հայ բեմի անցեալը շատ սերտ կապված է այդ կախարդական անուան հետ։ Ադամեանը Նախիջևան է եկել մի քանի անգամ՝ 60-ական թուականներում հանդուցեալ Ցատուլաճեանի խմբի հետ և ապա 80-ական թուականներին մի քանի անգամ։

Դրամատիկական ընկերութիւնը վճռել է Ադամեանի տասնամեակի մահվան յիշատակին նուիրված ներկայացման խաղալ «Սէր և Նախապաշարմունք» կօմեդիան, ներկայացման ժամանակ լինելու է ապօթէօզ համարեա նոյն ձևով, ինչպէս Թիֆլիսում, մի քանի փոփոխութեամբ միայն։

Ապա Ադամեանի անուան հետ կապված ցուցահանդէս։ Թատրոնի ֆոյէում, առանձին չքեղ պատրաստված վիտրինայում դրվելու են Ադամեանի նուէրները, որոնք ինչ որ հրաշքով մնացել են մինչև այժմ մեր քաղաքի փոխադարձ վարկի ընկերութեան ձեռքում։

Ներկայացման համար յատկապէս արդէն պատրաստված է Ադամեանի կիսարձանի մոդելը։ Կիսարձանը *) պատուիրված է Բօստօվի Մէնցիօնէ իտալացի քանդակագործի գործարանում։ Ամբողջ կիսարձանը պատուանդանի հետ միասին արժէ 1200 բուբլի, որը, շնորհիւ պ. Դաւիթ Խոջայեանի, դրամատիկական ընկերութեան պիտի արժենայ մի քանի հարիւր բուբլի, գուցէ և ոչինչ։

Ց. Գենջեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, մարտի 12-ին

Պետերբուրգից մի խումբ ուսանողներ «Бакинскія Извѣстія»-ում իրանց բողոքը միացնում են Բ. Կ.-ի ձայնի հետ, և ցաւ յայտնում, որ «Մշակը» այլ ևս նախկինը չէ, որ նա միայն Արծրունու մտքերն է հարիւրերորդ անգամը թոյլ կերպով առաջարկում հասարակութեանը, որ նա այլ ևս չէ արտայայտիչ կեանքի պահանջների։

Որքան իրաւացի են նրանք և նրանց հետ ուրիշ շատ այդպէս ասողները, այդ չենք ուզում քննել, միայն անհրաժեշտութիւն ենք զգում տալու, որ քննադատութիւնը շատ է էժանացել, որովհետև այդ ձևի քննադատ լիներն այնքան էլ դժուարութիւններ չէ ներկայացնում։

Նոյնպիսի անհրաժեշտութիւն ենք զգում ասելու.—դուք ցաւ էք յայտնում, որ «Մշակը» հնանում է, առողջ մտքեր այլ ևս չեն քարոզվում այնտեղ, բայց, պարոններ, մենք, ընթերցողներս, կարօտ մնացինք ձեր առողջ մտքերը «Մշակի» էջերում կարդալու։ Ձեզ հետաքրքրում է «Մշակի» դրութիւնը, դուք ողբում էք նրա «անկումը». այդ նշանակում է, որ նա որոշ տեղ ունի բռնած ձեր սրտում. բայց սպասելուց աչքներս ջուր կտրեց և մի անգամ չը տեսանք, թէ ինչպէս դուք ձեր զօրեղ գրչով, թարմ ուժերով հանդէս դուրս եկաք, ձեր «ընկնող» «Մշակը» բարձրացնելու։ Ձեզնից միայն մի բան տեսանք. հեռու կանգնած՝ կանչում էիք. «Մշակն» ընկնում է»։

Կամ գուցէ ձեր կենսական խնդիրներ չոչափող յօդուածները «Մշակը» զամբիւղը նետեց և հոգեփոխութեան մասին յօդուածներ շարեց. գուցէ ձեր այրող, հրատապ հարցեր արթնացնող գրուածքները խմբագրութեան պահարաններում փակված մնացին և «եղել է, չի եղել» հէքիաթներին առաջ անցկացրվեցին։ Եթէ այդպէս է իսկապէս, «Մշակը» եթէ ընկած չէ, ապա, անխուսափելի է, կընկնէ. իսկ եթէ ոչ, այդպէս չէ, ապա դուք միայն անբարեխիղճ «քննադատներ էք»։

Այս բոլորն ի նկատի ունենալով մենք ասում ենք. պարոններ, բարձրացրէք «Մշակը», եթէ ընկնում է. և որովհետև կարողութիւն ունէք նրա փառաւոր անցեալի և ներկայ դրութեան մէջ զանազանութիւն գտնելու, ապա հանդէս դուրս եկէք ձեր ուժեղ գրչով նրան իր անցեալը վերադարձնելու։ Այդ մեր, ընթերցողներիս պահանջն է։ Իսկ եթէ այդ չէք անի, կամ անկարող էք անելու, և միայն մատներնիդ մեկնելով՝ ժպտալով կամ ցաւելով «Մշակն» ընկնում է» կը կանչէք, այն ժամանակ մենք, ընթերցողներս կասենք, որ ձեզ պէս քննադատներ մեզ հարկաւոր չեն և մենք կը շարունակենք ձեր յարձակումներն արհամարհելով «ընկնող» «Մշակը» կարդալ ընթերցողի այն հոտառութեամբ, որ «Մշակն» ասում է այն, ինչ որ կարող է, և որ նրա պակասութիւնները, եթէ ունի, մեզ աւելի սիրելի են, քան թէ ձեր կոկորդիլոսի արցունքները։

Մ. Տէր-Դանիէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են մեր երկրի զանազան տեղերից, որ գարունը այս տարի ամեն տեղ ուշանում է։ Շատ տեղերում դեռ ձմեռ է, սարահարթերում դեռ մեծ քանակութեամբ ձիւն կայ։ Տափարակներում ուրիշ տարիներ արօտները այս ժամանակ կանաչազարդ էին լինում, իսկ այս տարի նրանք դեռ չեն կենդանացել։ Տաւարապահները գանգատաւոր են ցրտից և խոտի պակասութիւնից։

—

Առաջիկայ ապրիլ ամսին Պետերբուրգից Կուզարկվի Կովկաս մի երկրաբան, որին կառավարութեան կողմից յանձնարարված է հետազօտել մեր երկրի հանքային հարստութիւնները ընդհանրապէս և պղնձի հանքատեղերը մասնաւորապէս։

—

Մեզ հաղորդում են, որ Մուղանի անապատում հաստատված նոր ռուս գիւղերում սկսել է չափազանց ընդարձակվել աղի հողերի, կամ շորաքեաթների տարածութիւնը։ Գաղթականները խնդրամատոյց են եղել, որ նրանց որոշ ցուցումներ տրվին մաքառելու աղահողի դէմ, այլապէս նրանք ստիպված կը լինեն թողնելու իրանց նոր բնակատեղերը։

—

Գեղարուեստների Կայսերական ակադէմիան, կամենալով հոգալ ռուս ճարտարապետութեան զարգացման մասին, որոշել է իւրաքանչիւր տարի ուղարկել տեղեակ անձերի Ռուսաստանի զանազան տեղերը՝ հետազօտելու և նկարելու հնութեան յիշատակարանները։ Այս հետազօտութիւնների շրջանի մէջ վճռված է մտցնել և Կովկասն ու Միջին-Ասիան։

—

Մեզ ուղարկված է Կուկիայի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխի՝ 1902 թուականի տարեկան հաշիւը։ Նրանից երևում է, որ այդ եկեղեցին անցեալ 1902 թուականին ունեցել է մուտք կայքերից, մոմի արդիւնքից, լուսաղնից, դանձանակից և զանազան նուիրատուութիւններից ընդամենը 8076 բուբլի 44 կոպէկ, իսկ ծախք եղել է ռոճիկների, մոմի, եկեղեցու պարսպի շինութեան և այլն—4948 բուբլի 90 կոպէկ, որ հանելով մուտքի գումարից՝ մնում է առ 1-ն յունվարի 1903 թուականի 3127 բուբլի 84 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը որոշել է բանակցութիւններ սկսել զանազան գործարանների հետ՝ էժանագին գիւղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար։

—

Յայտնի ռուս դերասանուհի Կօմիսարժեվսկայայի վերջին ներկայացումը Բօստօվում տխուր վերջ ունեցաւ։ Տալիս էին «Волшебная сказка» պիէսը։ Յայտնի է, որ այդ պիէսայի 3-րորդ գործողութեան վերջին կտորը դերասանուհին խաղում է արտաքոյ կարգի ոգևորութեամբ։ Այս անգամ ամենօրեայ ներկայացումներից յոգնած դերասանուհին ուժասպառ եղաւ. նա վատ զգաց իրան բեմի վրա և ուշաթափվեց։ Նրան տարան հանդերձասենեակը, որտեղ թատրոնում ներկայ գտնվող բժիշկները բժշկական օգնութիւն ցոյց տուին նրան։ Ապա դերասանուհուն ձեռքերի վրա տեղափոխեցին կառքը և հասարակութեան յայտնեցին, թէ ներկայացումը չէ կարող շարունակվել։ Առանց որ և է բողոքի, հանգիստ ու խաղաղ, հասարակութիւնը ցրվեց՝ չը տեսնելով մի ամբողջ գործողութիւն։ Սրանով հասարակութիւնը ցոյց տուեց իր սէրը և յարգանքը դէպի դերասանուհին։

—

Գիւղատնտեսական խորհրդի մերձաւոր նիստերից մէկում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կը քննվի երկրագործութեան դէպարտամէնտի մշակած այն ծրագիրը, որի նպատակն է զարգացնել և բարձրացնել Ռուսաստանում իւղագործական և պանրագործական արդիւնաբերութիւնը։ Ի միջի այլոց, համաձայն այդ ծրագրի, մտադրութիւն կայ նշանաւոր չափով աւելացնել կաթնային տնտեսութեան ուսումնարանների թիւը և հիմնել կաթնատնտեսական մի ինստիտուտ՝

*) Կիսարձանը մշտապէս դրվելու է քաղաքային թատրոնի ֆոյէում։

գոհացնելու համար այն չարունակ աճող պահանջը, որ զգացվում է լուրջ նախապատրաստութիւն ունեցող կաթնատնտեսամասնագէտների պակասութեամբ։

—

Այսօր, ժողովրդական թատրոնում, Աւճալեան փողոցի վրա, տեղի կունենայ հայերէն ներկայացում։ Կը խաղան Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» կոմեդիան։ Սկիզբն է առաւօտեան ժամի 11-ին։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊԼԻՑ մեզ գրում են. «Երկար ժամանակից ի վեր մենք չենք ճաշակել գեղարուեստական մի այնպիսի զուարճութիւն, որպիսին մենք առիթ ունեցանք ճաշակելու չնորհիւ դերասան պ. Արմենեանի երկրորդ ներկայացման, ամսի 9-ին, Քաղաքային կլուբի դահլիճում, խուռն բազմութեան ներկայութեամբ։ Պ. Արմենեան այդ օրը խաղաց Էմ. Օժիէի և Ժ. Սանդոյի 4 արարուածով կոմեդիան, որ կրում է «Պարոն Պուարէի փեսան» վերնագիրը։ Խաղն անցաւ խիստ կենդանի և գեղեցիկ և դերասաններից մի քանիսը արժանացան հանդիսականների բուռն և երկարատև ծափահարութիւններին։ Պ. Արմենեանը գեղեցիկ ազնուականի դերում, Միրզոյեանը տգէտ բուրժուայի և տիկին Դանդուբեան-Արմենեանը Անթուանէտի դերում շատ գեղեցիկ և գրաւիչ էին։ Թատրոնը համարեա լիքն էր. խաղից յետոյ շատերը խնդրեցին պ. Արմենեանին տալ երրորդ ներկայացումը։ Շնորհալի դերասանը, որ առհասարակ իրան շատ լաւ պահեց և չը դիմեց զանազան միջոցների տոմսակների վաճառման համար, խոստացաւ տալ իր երրորդ ներկայացումը ամսիս 22-ին, Կարսից վերադառնալուց յետոյ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Բագու հիւբ եկած պ. Բաչինջաղեանը տեղիս կլուբի սենեակներից մինում բացեց պատկերահանդէս։ Բագուցիները առաջին անգամ չեն տեսնում պ. Բաչինջաղեանի վրձինի նուրբ արտադրութիւնները, որոնց մէջ ցերեկի պէս փայլում է նրա կարչի բնատուր տաղանդը։ Մօտ 35 յոյց դրված նկարների մէջ աչքի են ընկնում հետեւեալ պէյզաժները։ 1) Грабовый лѣсъ осенью (№ 4)—ահա բնութեան մի տեսարան, որ նրա կարիչը կաչկանդել է նեղ չրջանակի մէջ։ Այս պատկերը յիշեցնում է մեզ պրոֆէսօր Շիշկինի (որ կրում է «Անտառի արքայ» մականունն) հրապուրիչ նկարները։ Այս նկարները ուշադրութեամբ դիտողը իրան զգում է բնութեան գրկում վիթխարի ծառերի մէջ, չնչում է թարմ օդ և լսում է տերևների վշվշոց։ 2) Ворота очарованія въ Абастуманѣ (№ 23)—ահա մի երկրորդ պատկեր, ուր նկարիչը ոչ մի ջանք չէ խնայել բնութեան հոգի ներչնչելու այդ փոքրիկ կտաւին։ Լուսնեակը իր չողչողուն լոյսով լուսաւորում է այդ սիրուն տեսարանը. երկնակամարի վրա կորկոտոր ամպերը կտրծես արագ-արագ լողում են անհուն տարածութեան մէջ և երբեմն-երբեմն ընդգրկվում լուսնեակի հետ ու ապա հեռանում։ 3) «Казбекъ въ туманѣ» և «Араратъ со стороны Эривани» (№ № 9 և 11). այստեղ նկարիչը այնքան կենդանի և այնքան ճիշդ է ընդօրինակել սարն ու քարը, խոտն ու բոյսը, որ կարծես թէ կանգնած լինես այդ տեսարանների առաջ։ Արարատի ստորոտից հետզհետէ մշուշը բարձրանում է ու պարզվում ձիւնապատ վեհ գագաթը։ 4) «Изъ развалинъ г. Ани» 3 մեծադիր պատկերները և շատ ուրիշները»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Բաւական տաք, համարեա գարնանային օրերին յաջորդեց մի ցուրտ, խիստ տխուր եղանակ։ Այսօր տեղաց բաւական ձիւն և դեռ տեղում է»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Կիրակի, մարտի 9-ին, պատարագից յետոյ կայացաւ Իգդիրի ս. Սահակ եկեղեցու երէցփոխի նոր ընտրութիւն, մեր գաւառի գործակալ հայր Մ. Շաւարշեանի նախագահութեամբ։ Նախ քան նորընտրութիւն սկսելը, նախկին երէցփոխ Սումբատեան մանրամասն հաշիւ ներկայացրեց ժողովրդին իր երեքամեայ գործունէութեան մասին։ Պ. երէցփոխի պարզ հաշուից երևաց, որ նա 3 տարվայ ընթացքում կարողացել է, բացի բոլոր ծախսերից, յետաձգել ևս կանխիկ դրամ 1731 ր. 27 կ., որ գտնվում է տեղային խնայողական դրամարկղում։ Հասարակութիւնը յայտնեց իր սրտագին շնորհակալութիւնը պ. երէցփոխին, որ նա իր ամբիծ և հաւատարիմ ծառայութեամբ կարճ ժամանակամիջոցում կարողացել է աւելի ձեռք բերել, քան թէ իր բոլոր նախորդները 70 տարվայ ընթացքում, Իգդիրի եկեղեցին կառուցանելուց յետոյ։ Ժողովը միաբերան վերընտրեց նախկին երէցփոխին և նրա հաւատարիմ ծառայութեան վարձատրութիւն եղաւ այն, որ ամենքը միաբերան խոստացան նրան բոլոր գիւղական հարկերից ազատել, քանի որ նա այդ պաշտոնումն է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Այն պատերազմի ուրուականը, որ կարող է ծագել Բալկանեան թերակղզում, ըստ երևոյթին, սերբերի և բոլգարների մէջ ցանկութիւն է ծագեցրել աւելի սերտ կապերով միանալ միմեանց հետ և ընդհանուր ոյժերով գործել իրանց դարաւոր թշնամու—Թիւրքիայի դէմ։ Ինչպէս գրում են «Temps» լրագրին Վիէնայից, ներկայումս Ալէքսանդր թագաւորը և իշխան Ֆերդինանդ բանակցութիւններ են վարում միմեանց հետ այդ մասին իրանց լիազօրների միջոցով։ Փոխադարձ մերձեցման գաղափարը սերբերի և բոլգարների մէջ ծագել է վաղուց, 1885 թուականի պատերազմից յետոյ, բայց իրագործվել է, և այն էլ մասամբ, միայն յոյն-թիւրքական պատերազմից առաջ, 1897 թուին։ Երկու կառավարութիւնների այն ժամանակվայ մինիստրներները, Սիմիչ և Ստոյիլով, կազմեցին համաձայնութեան մի գրաւոր նախագիծ, որ բաղկացած էր չորս յօդուածներից. 1) միասին վճռել այն բոլոր հարցերը, որոնք չչափում են բոլգարների և սերբերի շահերը Թիւրքիայում. 2) առանց նախապէս համաձայնութիւն կապելու միմեանց հետ, չանել ոչ դիպլոմատիական և ոչ պատերազմական քայլեր, որոնք հակառակ լինէին Թիւրքիայում status quo պահպանելուն. 3) թիւրքական իշխանութեան տակ մնացած երկիրներում բոլգարական և սերբիական ազդեցութեան սահմանները ընդհանուր համաձայնութեամբ որոշելուց առաջ՝ փոխադարձաբար օգնութիւն ցոյց տալ միմեանց յիշված երկիրներում ծագող ազգային, դպրոցական և եկեղեցական հարցերում. 4) Սերբիայի թագաւորը և բոլգարների իշխանը պէտք է աշխատեն, որ նրանց համաձայնութեանը միանայ նաև Չերնոգորիայի իշխանը։ Այս համաձայնութեան ամենաէական յօդուածը, ի հարկէ, 3-րդ յօդուածն է՝ բոլգարների և սերբերի ազդեցութեան չրջանները Մակեդոնիայում որոշելու մասին, բայց այդ յօդուածը գործնական ոչ մի հեռանկար չունեցաւ, չը նայելով այն երկար բանակցութիւններին, որ վարում էին երկու պետութիւնները միմեանց հետ և նրանց համակրում էին նոյն իսկ յոյները։ Այդ բանին արգելք հանդիսացան ռուսաց և աւստրիական կայսրների տեսակցութիւնը միմեանց հետ 1898 թ. ապրիլ ամսին, աւստրօ-ռուսական դաշնագիրը Բալկանում status quo պահպանելու մասին, ապա միմեանց չրջաբերականները, որոնք այդ երկու մեծ պետութիւնների կողմից ուղղվեցին Բուխարէստի, Բէլգրադի և Սոֆիայի մինիստրութիւններին և վերջապէս Միլանի, բոլգարների և չերնոգորցիների այդ երդուեալ թշնամու վերադարձը դէպի Սերբիա։ Բայց բոլգար-սերբիական միութեան գաղափարը չը խեղդվեց և այժմ նա նորից հանդէս եկաւ՝ գուցէ վերջնական լուծումն ստանալու համար։

—Անգլիական պարլամէնտի վերջին նիստերից մէկում սըր Ռուբէր Հարցասնդուսմ արեց ծովային մինիստրին այն մասին, թէ յայտնի է արդեօք կառավարութեան, որ Կանադան որոշել է ունենալ իր սեփական պահեստի նաւատորմ, որ ենթարկված չը լինի բրիտանական իշխանութեան։ Սըր Արնօլդ Ֆորստէր պատասխանեց, որ անգլիական ծովային մինիստրութիւնը այդ մասին ոչ մի տեղեկութիւն չէ ստացել, որ այդ հարցը վերաբերում է բացառապէս միայն Կանադային և չէ ցոյց տալիս, որ Կանադան ուզում է բաժանվել Բրիտանիայից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Ես այս տարի չը նկարագրեցի այն ուսանողական երեկոյթը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում։

Բայց մի դէպք, որին ես ականատես էի այդ երեկոյթին, յաճախ իմ միտքն է գալիս և ես այսօր մտադիր եմ հաղորդել ձեզ նրա մասին։

Երեկոյթը բազմամարդ էր և աշխոյժ։ Ուսանողական համազգեստը փայլում էր դահլիճների այս և այն անկիւնում և հանդիսականների ուշադրութիւնը գրաւում։

Ուսանողը այդ երեկոյի սիրելին էր, զուարճութեան աղը, օրվայ հերոսը։ Նրան որոնում էին, նրանով հրճվում, նրան ողջունում, նրա հետ պարում, նրա հետ հաճոյախօսութիւններ անում։

Նայեցի հանդիսականների ժպտուն երեսներին, զուարճախօսեցի պատահած ծանօթներիս հետ, լսեցի չարաճճի մի օրիորդի սրախօսութիւնները և անցայ դէպի սեղանատունը։

Հեռու անկիւններից մէկում տեսայ յանկարծ իմ վաղեմի ծանօթ Արտուրեանին և ուղղեցի իմ քայլերը դէպի նա։ Ես կամենում էի նրա հետ խօսակցել և իմ տպաւորութիւնները նրան հաղորդել։

Բայց նրա տեսքը ինձ զարմացրեց և սարսափեցրեց։ Նա նստած էր մի սեղանի մօտ չափազանց մռայլ և տխուր դէմքով, աչքերը սեւեռած սեղանի ծածկոցի վրա և անդադար չփում էր իր ճակատը։

—Արտուրեան, բարև, ասացի ես, ինչ էք այստեղ նստել։

Նա գլուխը բարձրացրեց և ես նրա աչքերի մէջ տեսայ խոշոր կաթիլ։

—Բարև, բարև, սթափվելով վրա բերեց նա, նստեցէք, դուք էլ այստեղ էք... դահլիճում ես ձեզ չը տեսայ... ինչպէս էք։

Այս հարցերը կցկտուր շարեց նա իմ առաջ և աչխատեց ժպտալ։

—Դուք տխուր էք, նկատեցի ես, ինչ է պատահել։

—Ոչինչ։

—Դուք մտատանջ էք, չարունակեցի ես, մի ցաւ, մի հոգս ունէք։ Այստեղ, այս ուրախ և ծիծաղկոտ հասարակութեան մէջ ձեզ տեսնել այդպիսի վշտալից դէմքով—ինձ համար անհասկանալի է։

Արտուրեանը բացատրեց, որ ոչ մի անախորժութիւն տեղի չէ ունեցել նրա կեանքում և որ նա եկել է երեկոյթին միայն զուարճանալու։

—Ուրեմն, կատակով նկատեցի ես, դուք տխրել էք այս չափազանց ուրախ քրքիջից և գարնանային թարմ տրամադրութիւնից։

—Ոչ, ոչ և ոչ, խօսքս կտրեց Արտուրեանը։ Ես ողբում էի իմ մահը։ Ես տեսնում էի իմ թաղումը։

Արտուրեանը յուզված յետ ընկաւ աթոռի վրա, փոքր ինչ նայեց ինձ վրա և յետոյ սկսեց սիրտը բաց անել։

—Խեղդվում եմ, բարեկամ, ասաց նա, մի խայթոցից, որ այս երեկոյ այստեղ ինձ յաղթահարել է։ Տասն ութ տարի առաջ ես ուսանող էի։ Տասն ութ տարի։ Այն ժամանակ առոյգ, թարմ, վստահ՝ ես նայում էի ապագայի վրա լի հաւատով և ուխտել էի գործել այն անձնուիրութեամբ, որին ընդունակ է մատաղ, երիտասարդական հոգին։ Անցան տասն ութ տարիներ։ Եւ այժմ նկատում եմ, որ ես դաւաճանեցի իմ երդումներին, ոչինչ չիրագործեցի այն ծրագիրներից, որ մշակել էի։ Ինչպէս անցան այդ տասն ութ տարիները, ինչու ես ընդհանուր հոսանքի մէջ մոռացայ իմ գաղափարական տենչանքները... ծանր է զգալ, որ ես իբրև գաղափարի մարդ մեռել եմ և դարձել անպէտք՝ կեանքի համար։

Ես չը փորձեցի արդարացնել Արտուրեանին և մեղմացնել նրա խղճի խայթոցը։

—Գոնէ այժմ, ասացի նրան, եկ ազատենք այն, ինչ որ դեռ կարելի է փրկել։

Եւ խօսեցինք այն բանի մասին, թէ ինչ կարելի է դեռ անել։

—Արդեօք ուշ չէ, հարցրեց Արտուրեանը։

—Երբէք ուշ չէ, ասացի ես, ուշը չը գործողի համար է, իսկ գործողի համար հասակ չը կայ։ Եթէ լինէինք վաթսուն տարեկան անձինք՝ դարձեալ ուշ չէ։

—

Ես յիշեցի մի ուրիշ դէպք։

Անդրկովկասում կար մի գործող, այժմ հանգուցեալ, Կուչաեվ ազգանունով։ Նա ազդեցիկ դեր է կատարել և ունի թողած աշխատութիւններ։

Երբ նա հեռանում էր մեր երկրից, նրան տուին մի հանդիսաւոր ճաշ։ Կուչաեվի հին բարեկամներից մէկը, Մորոզ, նոյնպէս հանգուցեալ, մի ճառ ասաց, որի մէջ նկարագրեց Կուչաեվի առաջին քայլերը, նրա իդէալական մաքուր ձգտումները, նրա լուսաւոր սկզբնական գործունէութիւնը։

Ցանկարծ ճառը ընդհատվեց Կուչաեվի ջղային լացից և հեկեկանքից։ Նա չէր կարողանում իրան զսպել։

—Ես մաքուր էի և ուզում էի մաքուր մընալ, մրմնջում էր նա, ես ցաւում եմ, որ այնքան և այնպէս չը գործեցի, ինչպէս կը ցանկանայի։

Նա չը կացողացաւ չարունակել։ Նրան հանգստացրին և սիրտը փաղաքշեցին, յայտնելով, որ գնահատում են և այն, ինչ որ նա արել է։

—

Որ նախկին ուսանողները կեանքի մէջ շատ անգամ բոլորովին չեն իրականացնում ոչ մի իդէալ, կամ գործում են շատ քիչ, դա չափազանց լաւ յայտնի է։ Բայց ցաւալի է, երբ մարդ նոյն իսկ ուսանող եղած ժամանակ չէ կարողացել իդէալական լինել կամ համակվել է մարդատեացական և խաւարամիտ տրամադրութիւններով։

Ոչ մի բան այնքան ծանր չէ ազդել և չէ ազդում ինձ վրա, որքան ուսանողների բարոյական սխալները։

Ցիշում էք, որ երկու տարի առաջ Գերմանիայի ուսանողները մի կատաղի հալածանք էին սկսել օտար ուսանողների դէմ։

Չէք մոռացել, որ այս ձմեռվայ սկզբին նոյն իսկ Շվէյցարիայի նման մի ազատ երկրի ուսանողները ժընեվում հալածանք էին հրատարակել Ռուսաստանից եկածների դէմ։

Ուսանողներ և հալածանք օտարների դէմ։

Սարսափելի է։

Ուսանողութիւնը, որ հասարակութեան ամենազգայուն և իդէալին ձգտող դասակարգն է, մաքուր զգացմունքներով ոգևորվող տարրը, նա գլուխ է կանգնում ազգասերութեան և ստոր հալածանքների։

Մթթէ դա սարսափելի չէ։

Ցիշում եմ, որ Պետերբուրգում մի հրէայ ուսանող, տեսնելով հրէաների դէմ ատելութիւն նոյն իսկ ուսանողների մի չրջանում, բոլորովին չչմեց, չուարեց, մտածմունքների և մելancholութեան մէջ ընկաւ։

—Ինչպէս, զանգատվում էր մէկ օր նա մեզ, եթէ ուսանողների մէջ անգամ կան մեզ ատողներ և հալածողներ, էլ ուր վրա յոյս ունենանք։

Մելancholութիւնը հասցրեց խեղճին խելագարութեան։ Նա չափազանց յուսահատվել էր իր լաւագոյն յոյսերի մէջ։

—

Ես գիտեմ և գնահատում եմ պատանեկական ոգևորութիւնը և չափազանցութիւնը։

Բայց երբէք չէի ցանկանայ տեսնել ուսանողին վատ դերի մէջ, թոյլ գաղափարական ըմբռնողութեան մէջ, կորցրած հոտառութիւնը դէպի լուսաւորը և ազնիւը, անձնատուր եղած թիւրիմացութեան և բանսարկու ոգիների թելադրութեան։

Որքան նոյնպէս ցաւալի է, երբ անկատելի կերպով մարդիկ վատ դեր են կատարում հասարակական հոսանքների ընդհարման մէջ։

Այդ կողմից կարելի է ցաւել Պետերբուրգի այն մի խումբ ուսանողների վրա, որոնք հանդէս եկան նորերս իրանց ծիծաղաշարժ բողոքով այնտեղ, ուր պահանջվում է նրանցից միայն հանգստութիւն, գործակցութիւն, զինակցութիւն և անձնուէր աշխատանք։

Չէ, լուսեղէն հրեշտակը, որ սաւառնում է ուսանողութեան վրա, այդ ժամանակ հեռացել էր այդ խմբից։

Պէտք է զգուշանալ սխալ դիրք բռնելուց։

Ցամենայն դէպս շատ ծանր է, երբ դա կատարվում է ուսանողական նստարանի վրա։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նշանակվում են կառավարական պատուիրակներ միջազգային կոնգրէսներում՝ երկրագործութեան Հոլմում՝ Ֆիշէր Ֆոն-Վայդհէյմ և Կէրն և գործնական քիմիայի Բերլինում—Մոսկվայի Գիւղատնտեսական ինստիտուտի պրոֆէսօր Պրեանիշնիկով։

ՍՕՖԻԱ։ Իշխանն ընդունեց մինիստրութեան հրաժարականը։

ՄԷՏԿՕՎԻՉ (Դալմացիա)։ Վաղ առաւօտեան, չորս ժամից յետոյ, այստեղի չրջանում զգացվում էր երկրի տատանումն հինգ վայրկեան չարունակ, ստորերկրեայ աղմուկով և խուլ ձայնով։

ԼԻԻԲՔԷՄԲՈՒՐԳ։ Երեք օր չարունակվող վիճաբանութիւններից յետոյ պատգամաւորների ժողովը ընդունեց երկաթուղային սակագնային դաշնակցութիւնը Գերմանիայի հետ չարունակելու հարցը։

ԲԵՐԼԻՆ։ Ձիով գնալու ժամանակ Գրիւնվալդում կայսրուհին ընկաւ ձիու հետ միասին, և թեթև կերպով ձեռքը կոտրեց։

ԱԹԷՆՔ։ Տարածում են որպէս լուր, որ թագաւորը, ի նկատի ունենալով ներկայ քաղաքական դրութիւնը, յետաձգեց իր ճանապարհորդութիւնը դէպի Գօպէնհագէն։

Լարիսում ոստիկանութիւնը ձերբակալեց մակեդոնական կամաւորներին, որոնք աշխատում էին սահման անցնել։ Թեսալիայի շատ քաղաքներից հաղորդում են, որ կասկածելի անձինք աշխատում են սահման անցնել։ Սահմանի պահպանութիւնը ուժեղացրված է։

ԲԷԼԳՐԱԴ։ Դունայեան չոգենաւով ստացվեցին վեց միլիոն փամփուշտներ, որոնք պատուիրված են Խիրտէնբէրգեան գործարանում։

ՀԱԱԳԱ։ Ի նկատի ունենալով այն, որ դէպքերը պահանջեցին զէնքի կանչել 1900 և 1901 թուերի պահեստի զինուորներին և մերձակայ ապագայում մտադրութիւն չը կայ արձակել նրանց, կառավարութիւնը վճռեց զինված պահել նրանց, մինչև որ օգտակար կը համարվի։

ՄԱԴՐԻԴ։ Մարտի 13-ին, Թագաւորի նախագահութեամբ, կայացաւ մինիստրների խորհրդի նիստը, որը որոշեց զօրքերի վրա ծախս 153,000,000 պէզէտ և զօրքի թիւը 100,000 մարդ։

Թագաւորը ստորագրեց հրովարտակ պատգամաւորների ժողովը արձակելու մասին։ Պատգամաւորների ժողովը և սենատը կը գումարվեն մայիսի 5-ին։

ԿԱՐՍ։ Վախճանվեց կազակների դիվիզիայի հրամանատար գեներալ-լէյտենանտ Եագոդին։

15 մարտի

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը կեանք չնորհեց Խաչիկեանին, որ մահվան էր դատապարտված հայոց պատրիարք Օրմանեանին ազատելու փորձի համար։

ԲԵՐԼԻՆ։ «Local Anzeiger» հաղորդում է, որ կայսրուհին ձիով զբօսնելու ժամանակ Գրունէվալդում ընկաւ ձիուց, վնասելով ձեռքը։ Նորին Մեծութեանը տեղափոխեցին որսորդական կլուբը Գրունէվալդում։ Բ՝ Իշկ է կանչված Բերլինից։

ԲԵՐԼԻՆ։ Տանժէրից «Times» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, Մարօկկոի սուլթանը, լուրերին նայելով 300,000 ֆունտ ստէրլինգի փոխառութիւն արեց Անգլիայում։

ԲԵՐԼԻՆ։ Հակառակ «Berliner Tageblatt» լրագրի հաղորդած տեղեկութեան այն մասին, թէ գերմանական դեսպանը այցելեց տիեզերական պատրիարքին և բուլգարական էկզարխին, խնդրելով ազդեցութիւն գործ դնել խաղաղութիւնը պահպանելու համար իրանց ստորադրեալ թեմերում, «Nordeutsche Zeituug» յայտարարում է, որ յիրաւի գերմանական դեսպանը քաղաքավարական այցելութիւն տուեց պատրիարքին, զգուշանալով որ և է ակնարկութիւններից վերոյիշեալի մասին։ Բուլգարական էկզարխին դեսպանը առհասարակ չէ այցելել։

ՊԱՐԻԶ։ Գրէնէլեան արուարձանում ցոյցեր տեղի ունեցան այն դրամական տուգանքի առիթով, որ դրված է «Petite Soeur des Pauvres»-ի վրա միաբանութիւններին վերաբերեալ օրէնքը խախտելու համար։ Հաղար մարդուց բաղկացած ամբոխը հաւաքվեց վանքի բակում և համակրական բացականչութիւններ սկսեց ի պատիւ քոյրերի։ Նոյնպիսի ցոյցեր սարքեցին կաթոլիկ ուսանողները պատգամաւորների ժողովի չինութեան առաջ։

ՊԱՐԻԶ։ Երէկ կայացած ժողովում 20 գլխաւոր վանահայրերից, վճռված է հրատարակել բացատրութիւն, բողոքելով այն բանի դէմ, որ միաբանութիւնները իբր թէ քաղաքական նպատակներին են ծառայում և զբաղվում են քաղաքականութեամբ։ Ինչպէս հաղորդում է «Figaro», միաձայն վճռվեց յամառ հալածանքներին հակադրել միայն չէզոք դիմադրութիւն։

ՍՕՖԻԱ։ Աղգային ժողովում մինիստրախաղահը հաղորդեց պաշտօնապէս, որ մինիստրութիւնը հրաժարական տուեց։ Նիստը փակված է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

Ի ԲԱԴՈՒ, Դ. Տ.—Դ. Զեր „Հայ ընթերցողի պահանջը“ անկարող եղանք տպագրել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՑԱՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Բանաստեղծութիւնների,

մեծ դիրքով, մօտ 350 էջ։

Շքեղ թղթի վրա, հեղինակի պատկերով և փառակազմ 10 ռուբլի, լաւ թղթի վրա 3 ռ.։ Բաժանորդագրութիւնը կը փակվի յունիսին և գրքերը կը տպվեն բաժանորդների թուով։

Թիֆլիսում դիմել—իշխ. Մարիամ Թումանեանին (Барятинская, 8) և Փ. Վարդազարեանին (Вольяминовская, 24). Բագու—ինժէներ Միխթար Տէր-Անդրիասեանին (Т-во Андраникъ) և Արամ Նազարէթեանին (к-ра Шагиданова)։ 5—10

Ծախվում է

ակուռի գործարան մի հողաբաժնի վրա, որ բաղկացած է 2250 քառ. սաժէնից, գտնվում է Խօջիվանքի գերեզմանատան եռևում, Արսենալի դիմացը, երկաթուղու նոր չինած կամրջի մօտ. շատ յարմար է ամեն տեսակ գործարանի համար։ Դիմել Լազարեվսկայա փողոց, № 15. Պետրոս Մարգարեանին կամ Ղամբարեանին։ 2—2

ԲՓԻԾԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բեբուտովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 72—150

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏ, ԱՐԱՖԵԼՕՎԻ ՏՈՒՆ, ԿԱԴԷՏՆԵՐԻ ԿՕՐՊՈՒՍԻ ՀԱՆԴԷՊ։

ԷԼԻՔՏՐԱԿԱՆ-ԿԵՆՍԱԳԻՐ

ԿԵՆԴԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ ներկայացումներ ցերեկվայ 4 ժամից, տօն օրերին—12 ժամից մինչև երեկոյեան 9 ժամը. ցոյց կը տրվեն «Օրլէանի կոյս» և շատ ուրիշներ. երեկոյեան ժամի 9-ից արտաքոյ կարգի ներկայացումներ։ Դրամատիական ֆէէրիա «Синяя Борода» և շատ ուրիշներ։ Ըստ ցանկութեան սէանսներ տալիս եմ և տներում։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է այնպիսի անձերի, որոնք ցանկութիւն ունեն յանձն առնելու չինել մի տուն Թիֆլիսի հրդեհաշէջների խմբի համար։ Ցանկացողները կարող են կապալով յանձն առնել կամ բոլոր աշխատանքը իրանց նիւթեղէնի հետ միասին կամ մաս առ մաս—քարեղէնի, փայտեղէնի և ուրիշ աշխատանքներ առանձին-առանձին։ Աշխատանքների վերջանալու ժամանակամիջոցը այս տարվայ սեպտեմբեր ամսի 1-ն է։ Այն անձինք, որոնք ցանկանում են յանձն առնել աշխատանքների մի մասը, պէտք է ցոյց տան իրանց վերցրած աշխատանքների վերջանալու պայմանաժամը։ Գրաւական պահանջվում է 10% բոլոր աշխատանքների արժէքից։ Ցայտարարութիւններ տալու ժամանակամիջոցը լրանում է մարտի 22-ի օրը, ցերեկվայ ժամի 2-ին։ Բոլոր նախահաշիւները և պայմանագրերը կարելի է տեսնել ուղրավայի չինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչև 3-ը։ 3—3

50,000

ծառեր փչատերև անտառի, եղևնի և չոճի, վեց վերշոկ և աւելի, տրվում են կտրելու իշխանուհի Մարիա Իոսիֆովնա Զավախովայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրա։ Բացի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանուհի Զավախովային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Жавахову. 8—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՂՐԱՎԱՆ

Սրանով յայտարարում է, որ դիւանատանը 1903 թուականի մարտի 19-ին, ցերեկվայ ժամի 1-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու քաղաքային մի հողաբաժին 10-րդ քաղամասում, 450 քառակուսի սաժէն տարածութեամբ, որի սահմաններն են. հիւսիսից՝ Մուշտայիդի փողոցը, արևելքից՝ Արդրէեվսկի փողոցի շարունակութիւնը, հարաւից՝ քաղաքային հողը, որ վարձել է Ալադաշովը, և արևմուտքից՝ մի հողաբաժին, որի վրա ծախվում են փայտեղէններ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը ուղրավայի 4-րդ բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչև 3-ը։ Փակ ծրարներ կընդունվեն աճուրդի օրը մինչև ժամի 1-ը։ 3—3

Պող. Կարա-Մուրզայի

խմբական փորձերը լինում են երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը, երեկոյեան ժամը 7-ից—9-ը միւնոյն դահլիճում։ (Вознесенская ул. № 8)։ 3—3

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի յայտնելու Ընկերութեան անդամներին, որ տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է մարտի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային տան դահլիճում։

Խորհրդակցութեան նիւթերը լինելու են՝
1) Վարչութեան 1902 թ. գործունէութեան հաշուետուութիւնը։
2) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը։
3) 1903 թ. նախահաշիւի քննութիւնը։
4) Խուզայեանի անունով օրիորդաց որբանոց բանալու թոյլտուութեան զեկուցումը։
5) Վարչութեան երեք անդամի, փոխ-ադամների և Վերաստուգող Յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւնը։ (12, 16, 20, 23 մ.) 2—4

Ա. Ի. ՄԱՆԹԱՇԵՎԻ ԳՕՍՏԻՆԻ ԴՎՈՐՈՒՄ

(Մէջին փողոց, № № 39—45)

ԲԱՑՎԱԾ Է ՄԱՆՐԱԾԱԽՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՀՈՒԴԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

Ս. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Բ. Ա. ՕՀԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Խնդրում ենք յարգելի հասարակութեան առաջիկայ ԳՆԱՐԱՆ ՍԵԶՕՆԻ ընթացքում համոզվել թէ յիրաւի մեր ապրանքները էժան են և գերազանց յատկութեան։

Բաժանմունքները՝ Վլադիկավկազում, Գրօզնիյում, Գէօրգիևսկում և Պոթայիսում։

ԳՆԵՐԸ ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ ԵՒ ԷԺԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ԶՈՒՆԻՆ ՄՐՑՈՂՆԵՐ.

Firman գոյութիւն ունի 1868 թուից։

2—6

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ՆԱԳԷԺԳԱ“

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը . . . . . 1,650,000 ռուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,303 »

Ի. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր ճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրեով նրանց պահեստներում, որի համար շատ կէսերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Ա. ՆԱՒԱԳՆԱՑ ԻԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (տիրիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ առօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէսերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի աւելի 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրոսպեկտի վրա, № 10-րդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագուում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Տելեֆոն № 108 (ե. ա. կ.) 48—120

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА XVI ый годъ изданія XVI ый

СѢВЕРЪ ежнед. иллюстр. лит. худ. журналъ

Въ 1903 году гг. подписчики получатъ БЕЗПЛАТНО 24 КНИГИ СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ Вс. С. Соловьева

автора историч. роман. „Сергѣй Горбатовъ“, „Вольтерьянецъ“ и др.
Въ каждой книгѣ отъ 112 до 240 и болѣе стран., отпечатан. на глазир. бумагѣ
— Это собраніе сочиненій стоитъ 15 руб. —

52 №№ роскошно иллюстрированнаго журнала, въ которомъ будетъ печататься новый интересный романъ гр. Е. А. Салиаса „Лорелейсъ“; 52 №№ (женед. обозрѣнія политической и общественной жизни; 12 №№ журнала „Парижскія Моды, Хозяйство и Домоводство“, со множествомъ рисунковъ и полезныхъ указаній; 12 №№ выкроекъ на отдѣльныхъ большихъ листахъ.

Кромѣ всего этого, годовые подписчики получатъ БЕЗПЛАТНО большую картину проф. Ю. Ю. КЛЕВЕРА „ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ“ Размѣръ картины, отпечатанной масляными красками, 12×18 верш. Въ отдѣльной продажѣ цѣна этой картины 5 руб.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ безъ дост. въ СП.— 6 р., съ дост. и перес. 7 р., на 6 м.—3 р. 50 к., на 3 м.—1 р. 75 к., за границу—11 р. РАЗСРОЧКА допускается по полугодіямъ и четвертямъ года. Подписки просятъ адресовать на имя редактора-издателя Ник. Ѳед. Мертца. (СПБ., Невскій, 170).

ГЛАВНАЯ КОНТОРА ЖУРНАЛА „СѢВЕРЪ“: СПБ., НЕВСКІЙ, 170. 11—21

Дозволено Цензурою. Тифлисъ, 15 Марта 1903 г. Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванская ул.